Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

19.006

Գուգեր Գեր. Ա.Լ.

Պայքար Տեկը

327.31
Գ-95

1931- երևան.

9-88

Ս. ՅԵՎ Վ. ԳՈՒՍՅԵՎՆԵՐ

ՄԱՅԻՍԻ ՄԵԿԸ

327.31
9-95

ՊԵՏՀՐԱՏ 1931 ԵՐԵՎԱՆ

327.31
Գ-95

15 JAN 2010
27 SEP 2006

РН
35926

Ս. ՅԵՎ Վ. ԳՈՒՍԵՎՆԵՐ

ՄԱՅԻՍԻ ՄԵԿԸ

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

12 7 MAR 2013

19.006

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿ. 1632
ԳՐԱՌԵՊ. 6407 (Բ.)
ՊԱՏՎԵՐ 2462
ՏԻՐԱԺ 6,000

3594-Ակ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊՐՈԼԵՏԱԿԱԿԱՆ ՏՈՆԸ

1889 թ. Փարիզում կայացավ յերկրորդ Ինտերնացիոնալի համագումարը: Այն ժամանակ յերկրորդ Ինտերնացիոնալի մեջ եյին մտնում բոլոր բանվորական սոցիալիստական կուսակցությունները: Նա ղեկավարում եր բանվորական հեղափոխական պայքարը բոլոր յերկրներում:

Համագումարը վորոշեց ամեն տարի բոլոր յերկրներում տոնել մայիսի 1-ը: Համագումարը կոչ արեց բանվորներին այդ օրը դադարեցնել աշխատանքը, յերթեր կատարել փողոցներում, պահանջել 8-ժամյա բանվորական օր: Մայիսի 1-ը հայտարարվեց բանվոր դասակարգի հեղափոխական յելույթների օր:

Մայիս 1-ի օրը տոնակատարության համար ընտրվեց այն պատճառով, վորովհետև օրն արդեն նշված եր պրոլետարիատի մարտական յելույթներով: 1886 թ. մայիսի 1-ին Ամերիկայի բանվորները գործադուլ արեցին: Չիկագո քաղաքում արյունահեղ ընդհարում տեղի ունեցավ բանվորների և վոստիկանության միջև: Բազմաթիվ բանվորներ սպանվեցին:

1890 թ. առաջին անգամ տեղի ունեցավ մայիսի 1-ի տոնակատարությունը: Այդ որվան պատրաստվում եր վոչ միայն պրոլետարիատը, այլ և բուրժուազիան: Քաղաքները զորք եյին տեղափոխում բանվորներին ցրելու համար: Փողոցներում յերթերն արգելված եյին:

Բայց, չնայած այդ բոլորին, մայիսի 1-ին բանվորները փողոց դուրս յեկան: Բազմաթիվ քաղաքներում ընդարումներ տեղի ունեցան մի կողմից բանվորների, մյուս կողմից՝ վոստիկանության և զորքի մի-

ջեվ։ Շատերը սպանվեցին և վիրավորվեցին։ Այսպես անցավ առաջին հեղափոխական մայիսվան։

Մայիսի 1-ը բուրժուազիայի առաջ ծառացավ, որպես համաշխարհային հեղափոխության սպառնալիք։

1896 թ. Լենինը գրում է.

«Ամեն տարի մայիսի 1-ի նախորյակին դող է անցընում մեր թշնամիների մարմնով՝ սկսած մանր գործարանատերերից, վերջացած ամենահզոր թագավորներով։ Նրանք գիտակցում են, որ շուտով վերջ է դրվելու իրենց տիրապետությանը։ Նրանք զգում են, որ ամեն տարվա մայիսմեկյան տոնակատարությունները բանվորական գումարտակների զորատեսն ու մանյորվրն են։ Այդ տոնակատարություններն կացնի հարվածներ են ուղղված այն նյուղին, որի վրա նստած են նրանք այդ՝ նրանց դագաղի խուփը գամող մուրճի ձայնն է»։

Մայսի 1-ի որն ամբողջ աշխարհի պրոլետարիատը կատարում է իր այն ուժերի զորատեսը, որոնք պատրաստ են կռվի դիմելու կապիտալի իշխանությունը տապալելու համար։ Աշխարհի մեկ վեցերորդ մասը հասել է այդ նպատակին։ Խորհրդային յերկրի բանվոր դասակարգը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ տապալել է բուրժուազիային և հաստատել իր իշխանությունը։ Բայց մենք շարունակում ենք մայիսի 1-ի տոնակատարությունը։ Այդ որը մենք ամփոփում ենք մեր հաջողություններն ու նվաճումները սոցիալիզմի շինարարության բնագավառում։ Այդ որը ԽՍՀՄ աշխատավորությունը համաշխարհային պրոլետարիատի հետ միասին համախմբում է իր ուժերը՝ պայքարելու հանուն համաշխարհային հեղափոխության, հանուն սոցիալիզմի հաղթանակի ամբողջ աշխարհում։

ԿԱՊԻՏԱԼԻ ԼՈՒ ՏԱԿ

1931 թվին բոլոր կապիտալիստական յերկրներում Մայիսի 1-ը տեղի յե ունենում առանձնապես լարված մարտական պայմաններում։

Կապիտալիստական աշխարհը գտնվում է տնտեսական չտեսնված ճգնաժամի (անկման) մեջ։

Գործարանատերերը չափազանց շատ ապրանքներ են արտադրել։ Այդ ապրանքը գնող չկա։ Բանվորների աշխատավարձը քիչ է։ Գյուղացիների յեկամուտը շատ փոքր է։

Գործարանները կրճատում են իրենց արտադրությունը։ Նրանցից շատերը փակվում են։ Բարձր գները պահպանելու համար կապիտալիստները վոչնչացնում են ապրանքները, այրում են կամ լցնում ծովը։

Միլիոնավոր աշխատավորների մեջ աճում են թշվառությունն ու սովը։ Միլիոնավոր բանվորներ և գյուղացիներ չեն կարողանում գնել հաց և ապրելու համար անհրաժեշտ մթերքներ։

Ճգնաժամը բոլոր յերկրներում առաջացրել է չտեսնված գործազրկություն։ Գործազրկությունն ընդգրկում է արդյունաբերական նորանոր ճյուղեր։ Նորանոր միլիոնավոր մարդիկ մատնվում են քաղցի, կարիքի, հուսահատության։

Ամերիկայում 12 միլիոն բանվոր աշխատանք չունեն։ Ամբողջ յերկրում թափառում են գործազուրկները։ Աճում է հանցագործությունների թիվը։ Բանտերը լեփ-լեցուն են։ Գործազուրկները հաճախ իրենք են ձգտում բանտ ընկնել, վորպեսզի գիշերելու տեղ ունենան։ Ամերիկայում ամեն որ քաղցից մեռնում է 1000 մարդ։

Գերմանիայում կա մոտ 5 միլիոն գործազուրկ։ Այս նշանակում է, որ այնտեղ յուրաքանչյուր յերեք բանվորից մեկը գործազուրկ է։ Յերեք բանվորական ընտանիքներից մեկը մատնված է դանդաղ սովամահության։ Լրագրերն ամեն որ հաղորդում են ինքնասպանության դեպքերի մասին, որոնք տեղի յեն ունենում գործազրկության պատճառով։ Մեծերը սպանում են յերեխաներին, վորպեսզի նրանց ազատեն քաղցի տանջանքներից։

Դրությունը նույնն է Լեհաստանում, Անգլիայում, Իտալիայում և այլ յերկրներում։ Կապիտալիստական յերկրներում 35 միլիոն գործազուրկ կա։ Ընտանիքների հետ միասին նրանց թիվը հասնում է 100 միլիոն հոգու։

Այդ 100 միլիոն մարդիկ դատապարտված են թշվառության և քաղցի:

Ավելի ու ավելի յե դժվարանում գյուղացիության դրությունը: Ավելանում են հարկերը, կապալավարձը, կալվածատերերին հատուցելիք պարտքերը, իսկ գյուղացիները վոչինչ չունեն վճարելու: Գյուղացիք թողնում են հողը և գնում քաղաքներն աշխատանք վորոնելու: Բայց այնտեղ նրանք միայն մեծացնում են գործազուրկների բանակը:

Բուրժուազիան ավելի յե ճգում ստրկացված յերկրների՝ գաղութների աշխատավորության վրին կապած քաղցի և կարիքի թոկը:

Անգլիական գաղութ Հնդկաստանում քաղցած են միլիոնավոր բանվորներ և գյուղացիներ: Ցորենի, բրինձի, բամբակի ամբողջ բերքը գրավում են անգլիացիք և փոխադրում Անգլիա:

Քաղցած գյուղացիք իրենց գավակներին ծախում են գործարանատերերին: 5–6 տարեկան յերեխաները մեծահասակների հետ միասին աշխատում են գործարաններում: Յերեխաները ստանում են միայն սնունդ: Նրանք ապրում են փակված, ինչպես բանտում, և որական աշխատում են 14 ժամ:

Բուրժուազիան գաղութներում յայնորեն կիրառում է հարկադրական աշխատանք: Զորքը բանվորներին և գյուղացիներին բռնությամբ քշում է դեպի գործարաններն ու կառուցումները: Հնդկաչինում ֆրանսիացիք հազարավոր բանվորների քշել են կաուչուկ հավաքելու (մի տեսակ բույսի խեժ, վորից պատրաստվում է ռետին): Բազմաթիվ գյուղեր այրվեցին և կործանվեցին, վորովհետև հրաժարվեցին աշխատելուց:

Չինաստանում տեր ու տնորեն են Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի և Յապոնիայի կապիտալիստները: Նրանք յերկիրը հասցրել են ազքատության անդունդի յեզերքը: Սովը հնձում է մարդկանց, վորպես դարհուրելի վարակիչ հիվանդություն:

Ցեվ այսպես ամեն տեղ, կապիտալիստական ամբողջ աշխարհում աճում են գործազրկությունը, կարիքը, սովը: Իսկ բուրժուազիան ավելի ու ավելի յե ուժեղացնում իր ճնշումն աշխատավորության վրա: Ճգնաժամի ամբողջ ծանրությունը նա ցանկանում է դնել աշխատավորության ուսերին:

Կապիտալիստները իջեցնում են առանց այն էլ ցածը աշխատավարձը, յերկարացնում են բանվորական որը: Նրանք չեն ցանկանում հրաժարվել հսկայական շահույթից: Նրանք չեն ցանկանում իջեցնել ապրանքների և մթերքների գները: Նրանք չեն ցանկանում ոգնել միլիոնավոր գործազուրկներին փրկվելու սովից:

Բայց, այսպես վարվելով, նրանք ավելի յեն ուժեղացնում աշխատավորության թշվառությունը, ավելի յեն խորացնում անտեսության անկումը:

ՊԱՅՔԱՐԸ ԲՈՐԲՈՔՎՈՒՄ Է

«Մի տարի առաջ յես աշխատում եյի գործարանում և լավ աշխատավարձ եյի ստանում: Այժմ յես կանգնած եմ այդ գործարանից մի քանի քայլ հեռու՝ ձեռքս պարզած: Յես այլյևս չեմ կարող հանդուրժել»:

Այս ամերիկյան մի բանվորի մահվանից առաջ թողած նամակն է: Բազմաթիվ ուրիշ գործազուրկների նման, նա թշվառությունից և քաղցից ազատվելու այլ միջոց չգտավ, քան ինքնասպանությունը:

Ցեվ խնդրես, վո՞րն է յելքը: Ումնի՞ց ոգնություն խնդրել: Ո՞ւր են բանվոր դասակարգի ղեկավարները:

Մի ժամանակ համաշխարհային պրոլետարիատի ղեկավարը յերկրորդ Ինտերնացիոնալն եր: Նա յեր, վոր հիմք դրեց պրոլետարական մարտական մայիսի 1-ի տոնին: Բայց վաղուց է, ինչ նրա առաջնորդները դավանանել են բանվոր դասակարգին և անցել բուրժուազիայի կողմը:

Պրոլետարական լավագույն մարտիկներն անջատվել են յերկրորդ Ինտերնացիոնալից: Այժմ նրա մեջ մընում են սոցիալ-դեմոկրատական (Մենշեվիկյան) կուսակցությունները:

Սոցիալ-դեմոկրատներն ամբողջ աշխարհում հավատարմությամբ ծառայում են բուրժուազիային: Նոքով նրանք բանվոր դասակարգի կողմն են, իսկ գործ-

նականում դավաճանում են նրան: Նրանք ամեն ինչ անում են հեղափոխական շարժումը խեղդելու համար:

Գերմանիայում 1918 թ. հեղափոխության որերին սոցիալ-դեմոկրատներն անցան իշխանության գլուխ: Նրանք անմիջապես հարձակում սկսեցին հեղափոխական պրոլետարիատի վրա: Նրանք գնդակահարեցին հազարավոր բանվորների: Նրանք սպանեցին գերմանական կոմունիստների առաջնորդ Կարլ Լիբկնեխտին և Ռոզա Լյուքսեմբուրգին:

Յերկրորդ Ինտերնացիոնալի մեջ գտնվող անգլիական «բանվորական կուսակցության» առաջնորդները 1926 թ. վիժեցրին հանքագործների գործադուլը: Նրանք ոգնում են բուրժուազիային կեղեքելու հնդկական բանվորներին և գյուղացիներին: Նրանք գնդակահարում են Հնդկաստանի գործադուլավոր բանվորներին:

Սոցիալ-դեմոկրատները հալածանքներ են կատարում Խորհրդային Միության դեմ: Նրանք կեղծիքներ և զրպարտություններ են տարածում մեր յերկրի մասին, վորպեսզի խաբեն, մոլորեցնեն իրենց յերկրների բանվորներին: Յերկրորդ Ինտերնացիոնալի առաջնորդներն ոգնում են համաշխարհային բուրժուազիային ԽՍՀՄ դեմ պատերազմ պատրաստելու մեջ:

Սոցիալ-դեմոկրատները քաղցած բանվորներին ասում են.

«Պետք է սպասել մինչև ճգնաժամը վերջանա: Պետք է հաշտվել և դիմադրել: Հուզմունքներ և գործադուլներ պետք չեն, ոժանդակեք կապիտալիստներին ճգնաժամից դուրս գալու: Յեկեք միասին փրկենք կապիտալիզմը»:

Սոցիալ-դեմոկրատներին միայն մեկ անգամ չե հաջողվել հիմարացնել բանվորներին: Բայց այժմ բանվորական մասսաներն ավելի ու ավելի յեն հեռանում յերկրորդ Ինտերնացիոնալից: Բանվորները գնում են կոմկուսակցության յետեվից: Կոմկուսակցությունները մերկացնում են դավաճաններին: Կոմկուսակցությունները կոչ են անում բանվորներին հարձակում գործելու քաղցի և թշվառության մեջ մեղավորների վրա:

Կոմինտերնը պրոլետարիատի իսկական առաջնորդն է: Նա համախմբում է իր մեջ բոլոր յերկրների կոմկուսակցություններին: Նա կազմակերպվեց 1919 թ. Լենինի ղեկավարությամբ:

Որ որի վրա պրոլետարական նոր մասսաներ են անցնում նրա դրոշակի ներքո:

Հեղափոխական շարժումը կոմինտերնի ղեկավարությամբ աճում է բոլոր յերկրներում:

Ամենուրեք գործադուրկները հրապարակ են գուրս գալիս հաց և աշխատանք պահանջելով: 1930 թ. մայիսի 1-ին գործադուրկները «սովարշավ» կատարեցին դեպի Լոնդոն (Անգլիայի մայրաքաղաքը): Արշավին մասնակցողները Լոնդոն յեկան յերկրի բոլոր կողմերից: Քաղաքներում կազմակերպվեցին գործադուրկների ցույցեր՝ ձեռնարկություններում աշխատողների հետ միասին:

Անգլիայում իշխանության գլուխ անցած սոցիալ-դավաճանները ձերբակալում եյին գործադուրկներին, նրանց հետապնդում եյին, վորպես ջրմոլիկների: Բայց մայիսի 1-ին 50.000-ից ավելի գործադուրկներ հավաքվեցին Լոնդոն և մասնակցեցին մայիսմեկյան յերթին:

Հեղափոխական ալիքն ամբողջ աշխարհում աճում և ամրապնդվում է: Աճում են գործադուրկները: Վերջին ամիսների ընթացքում Բեռլինում գործադուլ են արել՝ 140.000 մետաղագործ, Անգլիայում՝ 160.000 հանքագործ և 250.000 մանածագործ: Գործադուլներ են տեղի ունենում նաև այլ քաղաքներում և յերկրներում:

Լեհաստանում ապստամբեց Արևմտյան Ուկրաինայի կեղեքված գյուղացիությունը: Այրվում է կալվածատերերի գույքը: Անտառներում կազմակերպվում են գյուղացիական պարտիզանական ջոկատներ: Կառավարական զորքերն այրում և ավերում են գյուղերը, սպանում և կողոպտում են բնակիչներին, բայց ապստամբությունները չեն դադարում:

Հեղափոխական շարժումներ են սկսվել Իսպանիայում և Փորթուգալիայում: Գլորվում են աշխարհի վերջին թագավորները:

Ավելի և ավելի ուժգնորեն և բոցավառվում հեղափոխությունը գաղութներում և կիսագաղութներում:

Չինաստանում կազմակերպված է Կարմիր Բանակ։ Նա համառ պայքար է մղում գեներալների և կալվածատերերի դեմ։ Գրավված վայրերում հիմնվում է Խորհրդային իշխանություն։ 50 միլիոնից ավելի բանվորներ և գյուղացիներ արդեն ապրում են Խորհրդային շրջաններում։

Հնդկաստանում, Հնդկաչինում և Յեգիպտոսում չեն դադարում հուզմունքներն ու ապստամբությունները։

Ամբողջ աշխարհի բանվոր դասակարգը գործադրությունից, կարիքից և քաղցից յելք և փնտրում հեղափոխության մեջ։ Բանվորներն իրենց հայացքը դարձնում են դեպի ԽՍՀՄ։ Նրանք տեսնում են, թե իրենց աշխատանքի յեղրայրներն ինչպես են ապրում Խորհրդային Միության մեջ։ Նրանք տեսնում են, թե ինչպես աշխարհի մեկ վեցերորդ մասում զարգանում է սոցիալիզմը։ Կապիտալի յերկրներում միլիոնավոր պրոլետարներ այլևս չեն հնազանդվում բուրժուազիային և նրա գործակատար սոցիալ-դեմոկրատներին։

Կապիտալի յերկրների աշխատավորները մայիսի 1-ը կհամերաժացնեն մարտական յելույթներով ընդդեմ գործազրկության և թշվառության, ընդդեմ կապիտալիստական կարգերի։ Կոմկուսակցությունների ղեկավարությամբ նրանք նույնպես կգան կռվելու հանուն պրոլետարական հեղափոխության, հանուն բոլոր աշխատավորների հայրենիքի՝ ԽՍՀՄ պաշտպանության։

ԿԱՌՈՒՑՎՈՂ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՅԵՐԿՐՈՒՄ

Խորհրդային Միությունը մայիսի 1-ը դիմավորում է սոցիալիստական շինարարության մեջ ձեռք բերած մեծագույն նվաճումներով։

Մեր տնտեսությունն աճում է չտեսնված արագությամբ։ Բարելավվում է բանվոր դասակարգի և գյուղի աշխատավորության վիճակը։ Մենք վերացրեցինք գործազրկությունը։ Արդյունաբերական բանվորների կեսից ավելին փոխադրված է 7-ժամյա բանվորական օրվա, որն ամենակարճ բանվորական օրն է աշխարհում։

Մենք ծավալել ենք աշխարհում չտեսնված մեծագույն շինարարություն։ Արդեն աշխատում և Ստալինգրադի տրակտորի գործարանը, որը լավագույն գործարաններից մեկն է աշխարհում։ Լիակատար թափով է ընթանում տրակտորի գործարանների կառուցումը Խարկովում և Չելյաբինսկում։ Կառուցված է և արդեն աշխատում է Ռոստովի Սելմաշ (գյուղատնտեսական գործիքների) գործարանը։ Նիժնի-Նովգորոդում ավարտվում է ավտոմոբիլի գործարան— հսկայի կառուցումը։ Ուրալում աճում են Մագնիտոգորսկի շենքերը։ Դրանք հանդիսանալու յեն մետաղի արտադրության մեծագույն գործարանները։ Սիբիրում մշակվում են ածխահանքերի հսկայական պաշարները։ Թուրքսիբի նոր յերկաթուղին ձգվել է Միջին Ասիայի անապատներով։ Յեռում է շինարարությունը Դնեպր գետի վրա։ Մեկ տարուց հետո կսկսի աշխատել Դնեպրոստրոյը՝ աշխարհի մեծագույն ելեկտրոկայանը։

Ամբողջ ԽՍՀՄ շրջապատված է շինարարական փայտահյուսով։ ԽՍՀՄ դառնում է ելեկտրականության, տրակտորի և ավտոմոբիլի յերկիր։

Կուսակցության ղեկավարությամբ մենք վիթխարի նվաճումներ ենք ձեռք բերել հնգամյակի կատարման առաջարկում։ Մենք գերակատարել ենք հնգամյակի առաջին և յերկրորդ տարվա պլանները։

1930 թ. մենք կնկնակի չափով առաջ ենք անցել ցարական Ռուսաստանի արդյունաբերությունից։ 1930 թվին մեր արդյունաբերությունն աճեց 25 տոկոսով (մեկ ռուբլուն 25 կոպեկ)։ Այդ տեղի ունեցավ այն ժամանակ, յերբ կապիտալիստական բոլոր յերկրները գրանցվում են անկման շրջանում։ Ամերիկայում 1930 թ. 10 ամիսների ընթացքում արդյունաբերության արտադրանքը կրճատվել է 18 տոկոսով, Գերմանիայում՝ 14, Անգլիայում՝ 8, Լեհաստանում՝ 26 տոկոսով։

Առանձնապես ուժգնորեն աճեց ծանր արդյունաբերությունը, այսինքն՝ մետաղի, վառելանյութի հանույթը, մեքենաների արտադրությունը, ելեկտրականությունը։ Ծանր արդյունաբերությունը մեր ամբողջ արտեսության հիմքն է։ Նա հանդիսանում է խորհրդանշությունների և կոլտնտեսությունների շինարարության հիմքը։

Մենք զարգացնում ենք ամբողջ արդյունաբերությունը, իսկ առաջին հերթին և ամենից շատ ծանր արդյունաբերությունը: Հենց այս է, վոր կոչվում է յերկրի ինդուստրացում, վորը միաժամանակ ամրացնում է Խորհրդային Միության պաշտպանունակությունը:

«Մենք ինդուստրացման ճանապարհով ամբողջ թափով գնում ենք դեպի սոցիալիզմ»: (ՍՏԱԼԻՆ):

Սոցիալիզմը հաղթանակում է նաև գյուղատնտեսության մեջ: Աճում են խորհտնտեսությունները, վորոնք հանդիսանում են հացահատիկի, մսի և կաթի գործարաններ: Հիմնվում են մեքենատրակտորային կայաններ: Մանր, ցրված գյուղացիական տնտեսությունների տեղում աճում են կոլտնտեսությունները:

Գյուղատնտեսական հիմնական շրջաններում տընտեսությունների 67 տոկոսն արդեն կոլեկտիվացված է:

Առ 20 մարտի 1931 թ. ԽՍՀՄ բոլոր չքավոր և միջակ տնտեսությունների 40 տոկոսը մտել է կոլտնտեսությունները: 1930 թ. գարնանը և աշնանը կոլտնտեսությունները ցանել են 43 միլիոն հեկտար: Հնգամյա պլանով նախատեսվում եր, թե 1933 թ. կոլտնտեսությունները կունենան 20 միլիոն հեկտար ցանք: Այս նշանակում է, վոր մենք յերկու տարում կոլտնտեսական հնգամյա պլանը դերակատարել ենք կրկնակի չափով:

1930 թ. կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները տվել են ամբողջ հացահատիկի կեսը: Կոլտնտեսություններն ու խորհտնտեսություններն իրենց տված հացահատիկով փոխարինել են կուլակների արտադրած հացահատիկը:

Կուլակությունը վճռական հարձակում մղեց կուլակության դեմ: Համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակությունը վերացվում է, վորպես դասակարգ: Այս նշանակում է, վոր մեր յերկրում վոչընչացվում են կապիտալիզմի վերջին մնացորդները:

Մենք հաջողությամբ ենք մղում սոցիալիստական հարձակումն ամբողջ ֆրոնտով: Սոցիալիզմի հաղթանակն ապահովված է մեր յերկրում:

ՀՆԳԱՄՅԱԿԻ ՅԵՐՐՈՐԴ ՏԱՐՎԱ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Հնգամյակի յերրորդ տարում մեր յերկիրը մեծ չափերով կառաջադիմի ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ճանապարհով:

Գործի կդրվեն 500-ից ավելի նոր ձեռնարկություններ: Նրանցից շատերը յետ չեն մնա արտասահմանյան լավագույն ձեռնարկություններից:

Արդյունաբերության կարեվորագույն ճյուղերում մենք առաջ ենք անցել հնգամյա պլանի ուրվագծերից: 1931 թ. մենք ստանալու յենք 83 միլ. տոն ածուխ, իսկ հգամյակով նախատեսվում է 1933 թ. ստանալ 75 միլիոն տոն: 1931 թ. մենք կստանանք 75 միլիոն տոն նավթ, իսկ հնգամյակով 1933 թ. նախատեսվում եր ստանալ 22 միլիոն տոն: Գյուղատնտեսության համար 1931 թ. արտադրվելու յե 860 միլիոն ռուբլու մեքենա, իսկ հնգամյակը նախատեսում եր 1933 թ. տալ 610 միլիոն ռուբլու:

Իրականության մեջ այսպես է կենսագործվում հնգամյակը չորս տարում խնդիրը. արդյունաբերության կարեվորագույն ճյուղերում հնգամյակն իրականացվում է 3 տարում: Բազվի պրոլետարիատն իր հնգամյակը կատարեց յերկու ու կես տարում:

Մենք սկսում ենք հասնել և առաջ անցնել կապիտալիստական առաջավոր յերկրներից: Ահա այն նորը, վոր իր հետ բերում է հնգամյակի յերրորդ տարին:

Գյուղատնտեսական մեքենաների արտադրության գործում մենք առաջ կանցնենք Ամերիկայից և առաջին տեղը կգրավենք աշխարհում: 1931 թ. մենք պետք է արտադրենք 8 միլ. տոն չուգուն: Եթե մենք այդ կատարենք, ապա չուգունի արտադրության մեջ առաջ կանցնենք Անգլիայից: Զուգունի և ածխի արտադրության մեջ մենք առաջ կանցնենք Բելգիայից, իսկ պողպատի արտադրության մեջ՝ Ֆրանսիայից:

Հնգամյակի յերրորդ տարում մեծ չափերով կընդարձակվեն բամբակի, կտավատի, շաքարի, ճակնդեղի, կաչվի, բրդի արտադրությունը: Դրանից մեծ չափերով

կաճի թեթեվ արդյունաբերությունը՝ գործվածքների, շաքարի, կոշկեղենի և այլ սպառանքների արտադրությունը: Մեծ չափերով կկրճատվի սպառանքների պակասությունը: Կբարելավվի աշխատավորության դրությունը:

Մենք ամբողջ աշխարհին ցույց ենք տալիս պլանային սոցիալիստական տնտեսության հզոր ուժը: Մենք ավարտում ենք սոցիալիզմի հիմքի կառուցումը:

ՀԱՆՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ

«Մանր անհատական տնտեսության ուղին տանջանքների և կուլակի հանդեպ ստրկանալու ուղին է: Կոլեկտիվ հզոր աշխատանքի ուղին բարելավում է մեր դրությունը և տանում դեպի յերջանիկ ապագա՝ դեպի սոցիալիզմ»:

«Պրավդա» լրագրին ուղղած իրենց նամակում այսպես եյին հայտարարում դեմյանովական կոլտնտեսականները:

Դեմյան Բեդնու անվան կոլտնտեսությունը գտնվում է Նովոանենսկի շրջանում (Ստորին Վոլգա): Նա կազմակերպվել է 1930 թ. սկզբին և հենց այդ տարում մեծ հաջողություններ է ձեռք բերել:

Յուրաքանչյուր տնտեսություն միջին հաշվով ստացել է 1.275 ռ. յեկամուտ, այսինքն՝ անհատ տնտեսություններից յերկու անգամ ավելի: Կոլտնտեսությունը միջին հաշվով յուրաքանչյուր տնտեսության համար ցանել է 17 հեկտար: Նույն տնտեսությունները մինչև կոլտնտեսություն մտնելը ցանում եյին 8 հեկտար: Կոլտնտեսությունը 52.000 ցենտներ թանգարժեք տեսակավոր ցորեն է հանձնել պետությանը:

Այսպես, կոլտնտեսություններում բարձրանում է աշխատանքի արտադրողականությունը: Կոլտնտեսություններում չքավորն ու միջակը ազատվում են կուլակներին ստրկանալուց և կարիքից: Կոլտնտեսությունները ու խորհտնտեսությունները դյուղի լայն ճանապարհն են դեպի սոցիալիզմ:

Հնգամյակի յերրորդ տարում մեր դյուղատնտեսությունը մի նոր հսկայական քայլ կկատարի առաջ՝ սոցիալիզմի ճանապարհով:

Ամբողջ ԽՍՀՄ-ում կոլտնտեսությունները կընդգրկեն բոլոր գյուղացիական տնտեսությունների վոչ պակաս, քան կեսը: Կոլտնտեսությունների ցանքի տարածությունը կհասնի 66 միլ. հեկտարի անցյալ տարվա 43 միլ. դիմաց: Հացահատիկային գլխավոր շրջաններում գյուղացիական տնտեսությունների վոչ պակաս, քան 80 տոկոսը (հարյուրից 80-ը) կընդգրկվի կոլտնտեսություններում: Այդ շրջանները են՝ Ուկրաինան (դաշտային մասը), Հյուսիսային Կովկասը, Ղրիմը, Հարավային Վոլգան, Միջին Վոլգան: Այստեղ հիմնականում ավարտվում է համատարած կոլեկտիվացումը և կուլակի, վորպես դասակարգի վերացումը:

Գյուղատնտեսությունը մեկ տարում կստանա 120.000 տրակտոր: Տրակտորները խորհրդային դաշտերում դրոհ կմղեն բարձր բերքատվության համար: Կկազմակերպվեն 1000 նոր մեքենատրակտորային կայաններ:

Կազմակերպվում են նոր հացահատիկային խորհտնտեսություններ: Կառուցվում են խոշոր խորհտնտեսություններ, վորոնք զբաղվելու են բամբակի, կտավատի, շաքարի ճակնդեղի արտադրությամբ: Խորհտնտեսությունների բոլոր ցանքերը մեկ տարում կավելանան 5—10 միլ. հեկտարով: Խորհտնտեսություններին պատվիրված է կոլտնտեսությունների համար ցանել 500.000 հեկտար և ամեն կերպ ոժանդակել նրանց:

Նախորդ տարիներում մենք լուծեցինք մի կարևորագույն խնդիր: Մենք կարողացանք լուծել հացահատիկի դժվարությունների հարցը, մենք յերկիրն ապահովեցինք խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների հացով:

Այժմ մենք անմիջականորեն դիմում ենք անասնապահության բարձրացմանն: Այդ խնդիրը նույնպես մենք կլուծենք խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների ոգնությամբ:

«Սկատավոդի» խորհտնտեսություններն իրենց հատը 1 միլիոն գլխից հասցնելու են 2 միլիոն 800.000

գլխի։ «Սվինավոդի» հոսը 177.000-ից կհասնի մինչև 2 միլիոն գլխի։ «Սվցեվոդի» խորհտնտեսություններում վոչխարների թիվը պետք է հասնի 4 միլիոն գլխի։ Կմեծանա նաև կոլտնտեսությունների հոսը։

Կբարելավվի բանվոր դասակարգի մատակարարման գործը։ Կավելանա հումքի արտադրությունն արդյունաբերության համար։ Մոտակա տարիներում մենք վերջնականապես կվերացնենք մսի, յուղի, կաշվի, բրդի և այլ հումքերի պակասությունը։

Գյուղը փոխադրվում է սոցիալիստական խոշոր տնտեսության ռելսերի վրա։ Սոցիալիստական տնտեսությունը մեծ գերակշռություն է ձեռք բերում մանր անհատական տնտեսությունների հանդեպ։ Սրբվում է քաղաքի և գյուղի միջև յեղած սահմանը։ Ամրանում է բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության կապը։

Հնգամյակի վերջում մենք պետք է ավարտենք ԽՍՀՄ կոլեկտիվացումը և կուլակի, վորպես դասակարգի վերացումը։

Կուսակցությունը կոչ է անում անհատական չքավոր և միջակ տնտեսատերերին ոգնել կոլտնտեսություններին, մտնել կոլտնտեսություն։

Դեպի պայքար ընդդեմ կուլակի! Հանուն կոլտնտեսությունների!

Հանուն յերկրի համատարած կոլեկտիվացման!

Հանուն սոցիալիզմի հաղթանակի գյուղատնտեսության մեջ։

ՈՒԺԵՂԱՑՆԵՆՔ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Հնգամյակը 4 տարում կատարելը հեշտ չէ։ Այդ ճանապարհին մենք հանդիպում ենք բազմաթիվ դժվարությունների։

Մեր դժվարությունները աճման դժվարություններ են։ Մենք ամիս առ ամիս պետք է բարձրացնենք արտադրությունը։ Մենք պետք է ավելի շատ ցանենք, ավելի շատ հացահատիկ հավաքենք։ Շինարարության համար հարկավոր են խոշոր գումարներ։ Անհրաժեշտ

են լավ վարժված, իրենց գործն իմացող բանվորներ։ Մեզ մոտ բանվորական ուժը չի բավարարում։ Պակասում են տրակտորիստներ, դյուղատնտեսներ, տեխնիկներ, ճարտարագետներ։

Դասակարգային թշնամիներն ուժեղացնում են իրենց դիմադրությունը սոցիալիզմի հարձակման դեմ։ Կուլակը պայքարում է համատարած կոլեկտիվացման դեմ։ Կուլակը կոտրում է կոլտնտեսությունների մեքենաները, հրկիզումներ է կատարում, սպանում է կոլտնտեսական ղեկավարների։ Կուլակներն աշխատում են խցկվել կոլտնտեսությունները, վորպեսզի ներքուստ քայքայեն նրանց։

Քաղաքում դասակարգային թշնամին ներս է սողոսկում հիմնարկներն ու գործարանները։ Նա վնասարարական աշխատանքով փորձում է խափանել մեր շինարարությունը։

Թշնամին քնած չէ։ Ոտարերկրյա բուրժուազիան ուժեղացնում է սպառազինումն իր յերկրներում։ Նա պատրաստվում է հարձակում գործելու խորհուրդների յերկրի վրա։

Ահա, թե մենք ինչ պայմաններում ենք կառուցում սոցիալիզմը։ Ահա, թե ինչ դժվարություններ են կանգնած մեր առաջ։

Կուսակցության ղեկավարությամբ մենք հաղթահարեցինք հնգամյակի առաջին յերկու տարվա դժվարությունները։

1929 թ. մայիսի 1-ի նախորյակին կուսակցությունը դիմեց ամբողջ բանվոր դասակարգին և գյուղի աշխատավորներին, կոչ անելով.

«Մրցություն կազմակերպեք շինարարության բոլոր առաջարկներում։ Մրցություն կազմակերպեք գործարանների, հանքերի, յերկաթուղիների, խորհտնտեսությունների, կոլտնտեսությունների, հիմնարկների, դպրոցների, հիվանդանոցների միջև։ Մրցությունը կոժանդակի մեջ հաղթահարել շինարարության դժվարությունները և հնգամյակը իրականացնել 4 տարում։ Մրցությունը կոգնի հաջողությամբ հարձա-

3599-84

կում գործել կապիտալիզմի մնացորդների դեմ քաղաքում և գյուղում»:

Կուսակցության կոչին բանվոր դասակարգը պատասխանեց գործարանների համերաշխ մրցականչով, հանդիսական արդիինպլանով, հարվածային բրիգադներ կազմակերպելով:

Քաղաքից հետո մրցությունն ընդգրկեց նաև գյուղին: Կոլտնտեսություններում հարվածայինները պայքարում են աշխատանքային ամուր դիսցիպլինայի, կոլտնտեսության պլանների գերակատարման համար:

Խորհրդային Միությունը սոցիալիստական ազատ աշխատանքի երկիր է: ԽՍՀՄ բանվորներն իրենց երկրի, իրենց գործարանների տերն են: ԽՍՀՄ բանվորները կառուցում են իրենց սոցիալիստական տնտեսությունը, և սոցիալիստական շինարարության աճման հետ միասին բարելավվում է նրանց դրությունը:

Կապիտալիստական երկրներում բանվորի և գյուղացու աշխատանքի արդյունքը յուրացնում են կապիտալիստներն ու կալվածատերերը: Աշխատանքն այնտեղ մի ծանր լուծ է: Մեզ մոտ աշխատանքը՝ «փառքի, պատվի, պարծանքի ու հերոսության գործ է»: Մեզ մոտ ամենագնահատելի և պատվավոր բանը հարվածային լինելն է, աշխատանքի հերոս լինելը:

Առաջավոր հարվածայինները, իրենց գործի իսկական տերերը սովորեցնում և իրենց յետեվից տանում են ամբողջ բանվորական մասսան:

Այդպիսի աշխատանքի հերոսներից պետք է սովորել, նրանցից պետք է որինակ վերցնել:

Մայիսի 1-ի որն ավելի խորը ծավալենք սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը:

Աշխատավորների նորանոր միլիոններ մտցնենք հարվածայինների, հանուն սոցիալիզմի մարտնչող առաջավոր բանվորների շարքերը:

ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱՅԻ ՍՊԱՍՈՒՆԱԼԻՔԻ ՍՈԱՉ

1928 թ. մենք սկսեցինք հնգամյա պլանի աշխատանքները: Բուրժուազիան այն ժամանակ ծիծաղում էր մեզ վրա: Կապիտալիստները հնգամյակին անվանում էին անմիտ և ծիծաղաշարժ մի բայլ: Նրանք դուշակում էին հնգամյակի լիակատար վիժումը:

Սակայն, մեր թշնամիները սխալվեցին իրենց հաշիվների մեջ: Այժմ իսկ պարզ է, որ մենք հնգամյակը կկատարենք չորս տարում, իսկ արդյունաբերության ամենահիմնական ճյուղերում՝ 3 տարում: Մենք առանց կապիտալիստների ղեկավարության, առանց արտասահմանյան փոխառությունների կառուցում ենք մեր սոցիալիստական տնտեսությունը:

Բուրժուազիան այժմ ծիծաղելու վոչինչ չունի: Խորհրդային երկրում տեղի չի ունենում տնտեսության արագ վերելք, իսկ կապիտալիստների մոտ՝ ծանր անկում և քայքայում: Սոցիալիզմը հաղթանակում է աշխարհի մեկ վեցերորդ մասում: Խորհուրդների երկիրը ամբողջ աշխարհի պրոլետարիատին մատնացույց է տալիս բուրժուազիայի տիրապետությունից ազատագրվելու ուղին: ԽՍՀՄ շուրջն են համախմբվում բոլոր երկրների աշխատավորները: Հզորանում է հեղափոխական պայքարը բոլոր երկրներում:

Մեր հաջողությունները մոտեցնում են համաշխարհային հեղափոխության հաղթանակը: Մեր հաջողությունները կործանում են բերում համաշխարհային կապիտալին:

Մեր յուրաքանչյուր նոր հաջողություն, ամեն մի նոր քայլը դեպի առաջ՝ ուժեղացնում են կապիտալիստների կատաղությունը: Կապիտալիստները պատրաստվում են հարձակում գործելու խորհրդային երկրի վրա: Նրանք ցանկանում են խեղդել իրենց ատելի խորհրդային իշխանությունը: Նրանք ցանկանում են Խորհրդային Միությունը դարձնել իրենց գաղութը: Նրանք ցանկանում են ի հաշիվ ԽՍՀՄ կարգի բերել իրենց խախուտ դարձած տնտեսությունը: Նրանք ցանկանում են կործանել սոցիալիզմ կառուցող երկիրը, վորպեսզի ճգմեն իրենց երկրների հեղափոխական շարժումը:

Կապիտալիստներն արդեն փորձ կատարեցին հարձակվելու ԽՍՀՄ վրա: 1929 թ. չինական դեներալները հարձակում գործեցին մեր սահմանների վրա Հեռավոր

Արեվելքից։ Չինական գեներալները հանդես յեկան Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի բուրժուազիայի ցուցումներով։ Հարձակումը հանդիսացավ մեր ուժերի ստուգումը։ Յեթե պարզվեր, վոր Կարմիր բանակը թույլ է, բուրժուազիան իր զորքերով ընդհանուր հարձակում կսկսեր մեր դեմ։

Կարմիր բանակը ջախջախեց չինական զորքերին։ Կապիտալիստների արյունոտ խաղը վերջացավ անհաջողությամբ։ Սակայն կապիտալիստները չարունակում են ինտերվենցիայի, այսինքն՝ ԽՍՀՄ վրա զինված հարձակման պատրաստությունը։

Ինտերվենցիան արդեն նշանակված եր 1930 թ., իսկ հետո՝ 1931 թ.։ Վորպես հարձակման առաջամարտիկ հանդես յեկավ Ֆրանսիան։ Գլխավորապես զորք պետք է տային Լեհաստանը և Ռումինիան։ Անգլիան պետք է ոգներ իր նավատորմով։

Վնասարարական կազմակերպությունները պատրաստվում եյին ինտերվենցիայի մեր յերկրի ներսում։ Այդ կազմակերպությունները հայտարերված են։ Նրանց դատը մերկացրեց բուրժուազիայի արյունոտ դավերը։

Ինտերվենցիայի սպառնալիքը դեռևս մնում է մեր գլխին։ Մենք պետք է պատրաստ լինենք հակահարված տալու թշնամիներին։

«Մենք ուրիշի հողից վոչ մի թիզ չենք ուզում, բայց և մեր հողից մի վերշոկ վոչ վոքի չենք զիջի» (Ստալին)։

Ինտերվենցիայի սպառնալիքին մենք կապատասխանենք ամրացնելով մեր յերկրի պաշտպանունակությունը։ Ուժեղացնենք պայքարը, հանուն հնգամյակը չորս տարում կատարելու։

Լավ հիշենք ընկ. Ստալինի խոսքերը, վոր ասում է.

«Մենք առաջավոր յերկրներից յետ ենք մնացել 50—100 տարով։ Մենք այդ տարածությունը վազելով պետք է անցնենք 10 տարում։ Կամ մենք այդ կկատարենք, կամ մեզ կնզմեն»։

Վոչ մի քայլ դեպի յետ նախագծված պլաններից, կատարենք և գերակատարենք հնգամյակի յերրորդ՝ վճռական տարվա պլանը!

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՎՆԱՍԱՐԱՐՆԵՐԸ

Վերջին տարիների ընթացքում մենք հսկայական հաջողություններ ենք ձեռք բերել սոցիալիզմի շինարարության մեջ։ Դրա հետևանքով սկսեցին շարժվել արտասահմանի և յերկրի ներսի մեր թշնամիները։ Իրենց աշխատանքն ուժեղացրին վնասարարական կազմակերպությունները։

Վերջերս պրոլետարական դատարանի առաջ կանգնեցին «Արդյունաբերական կուսակցության» ղեկավարները։ «Արդյունաբերական կուսակցությունն» ընդգրկում եր մոտ 2000 վնասարար ճարտարագետ։ Այդ կուսակցության գլուխ եյին անցել հայտնի պրոֆեսորներ և ճարտարագետներ՝ Ռամզինը, Լարիչևը, Ֆեդոտովը և ուրիշները։ Նրանք պատասխանատու պաշտոններ եյին գրավում ղեկավար հիմնարկներում։ Կուսակցության և բանվոր դասակարգի վստահությունը նրանք չահագործում եյին հոգուտ վնասարարության։

«Արդյունաբերական կուսակցությունն» աշխատում եր արտասահմանից ստացած ցուցումներով։ Արտասահմանում կուտակվել են բավականաչափ ռուսական նախկին գործարանատերեր։ Նրանք Փարիզում ունեն իրենց կազմակերպությունը, վոր կոչվում է «Տորգպրոմ»։ «Տորգպրոմի» գլխավոր խնդիրն է ինտերվենցիա պատրաստել ԽՍՀՄ դեմ։

Ֆրանսիայի և այլ յերկրների բուրժուազիայի հետ միասին «Տորգպրոմը» մշակում եր ինտերվենցիայի պլանները։ «Արդյունաբերական կուսակցության» ղեկավարները «Տորգպրոմի» միջոցով եյին հրահանգներ և փող ստանում վնասարարության համար։

«Արդյունաբերական կուսակցությունը» փորձում եր ԽՍՀՄ ներսում առաջացնել տնտեսական անկում, սրել ապրանքային սովը։ Այդ հանգամանքը պետք է դյուրացներ բուրժուազիայի հարձակումը ԽՍՀՄ վրա։ Վնասարարներն աշխատում եյին քայքայել տրանսպորտը։ Աշխատում եյին առաջացնել վառելանյութի պակասություն։ Կասեցնում եյին հանքահորերի կառուցումը։ Դադարեցնում եյին չուգունի և յերկաթի արտադրությունը։

Վնասարարներն ինտերվենցիայի ժամանակ պետք է պայթեցնեին էլեկտրակայանները, ռազմական գործարանները, յերկաթուղային կամուրջները:

«Արդյունաբերական կուսակցության» հետ սերտորեն կապված եր հակահեղափոխական մի այլ կազմակերպություն՝ «Մենշեվիկների միութենական բյուրոն»: Այդ կազմակերպությունը հեղափոխության առաջին տարիներին ջախջախված մենշեվիկյան կուսակցության մնացորդներն եյին:

Վնասարար մենշեվիկները քայքայիչ, խարդային աշխատանք եյին կատարում կոոպերացիայում: Նրանք աշխատում եյին խախտել բանվորներին ապրանքներով և սննդամթերքներով մատակարարելու գործը: Վնասարար մենշեվիկներն աշխատում եյին Պետարանկում: Նրանք ձգտում եյին վարկերի սխալ բաշխման միջոցով քայքայել մեր արդյունաբերությունը: Պետպլանում նստած վնասարարները կատեցնում եյին ծանր արդյունաբերության աճումը:

Վնասարար մենշեվիկների թիկունքում կանգնած եր Յերկրորդ Ինտերնացիոնալը: Նրանից մենշեվիկները ստանում եյին վնասարարական պատվերներ: Նրանք կապ ունեյին «Տորգպրոմի» հետ:

ՄՊՔՎ հայտաբերեց նույնպես կոնդրատյեվականների կազմակերպությունը: Պրոֆեսոր Կոնդրատյեվի գլխավորությամբ վնասարարական այս խմբակը աշխատանք եր կատարում Հողժողկոմատում, Ֆինժողկոմատում, գյուղատնտեսական կոոպերացիայում:

Կոնդրատյեվականները պայքարում եյին կոլեկտիվացման դեմ և աշխատում եյին ամրացնել կուլակային տնտեսությունը: Նրանք յերկրում պատրաստում եյին կուլակային ապստամբություն:

Այսպես եյին «աշխատում» դատապարտյալներն ու վնասարարները: Բուրժուազիայի փողով նրանք արյունահեղ հաշվեհարես եյին պատրաստում խորհրդային յերկրի հանդեպ: Նրանք բոլորը համախմբված եյին մեկ ընդհանուր նպատակի շուրջը՝ խախտել հնգամյակը, վերացնել բանվոր դասակարգի իշխանությունը և վերականգնել կապիտալիստների և կալվածատերերի տիրապետությունը:

Վնասարարների հաշիվները սխալ դուրս յեկան: Բանվոր դասակարգը մրցության և հարվածայնության միջոցով գերակատարեց հնգամյակի առաջին և յերկրորդ տարվա պլանները:

Վնասարարների յեյությունը մենք պատասխանում ենք ուժեղացնելով աշխատանքը սոցիալիստական շինարարության բոլոր ասպարեզներում:

Վնասարարներին հաջողվեց թուլացնել տրանսպորտը: Տրանսպորտի դրությունը ծանր է: Բազմաթվանակ ապրանքներ թափված են կայարաններում, ուշացվում է վառելանյութի մատակարարումը: Մենք ինչ եվ որ լինի պետք է բարձրացնենք տրանսպորտի վիճակը: Մենք տրանսպորտին պետք է տանք շոգեկառքեր, ռելսեր, վագոններ:

Վնասարարական աշխատանքն իր արտահայտությունը գտավ նաև վառելանյութի մեջ: Վառելանյութի պակասությունը ստատնում է անհաջողության մատնել մեր աշխատանքը: Մենք պետք է պայքարենք վառելանյութի պլանների կատարման համար, հանուն 83 միլիոն տոնն ածխի, հանուն 25 միլ. տոնն նավթի:

Բայլեվիկոչեն պայքարենք հանուն 8 միլիոն տոնն չուգունի:

Ամեն ջանք գործ դնենք ժամանակին նոր ձեռնարկություններն աշխատեցնելու համար:

Վնասարարները ցանկանում եյին սոսմամահ անել մեր յերկիրը: Պայքարենք հանուն տնտեսության պլանների կատարման, հանուն յերկրի համատարած կոլեկտիվացման Գյուղատնտեսության ժամանակին տանք մեքենաներ և տրակտորներ:

Ամրացնենք աշխատանքային դիսցիպլինան, բարելավենք մեր ամբողջ աշխատանքը:

Հարվածային աշխատանքով բուժենք այն վերքերը, որ վնասարարները հասցրեցին մեր շինարարությանն:

ՀԱՆՈՒՆ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ

Օգ. 1 մայիսի մենք մեծ հաղթանակներ ունենք կուլտուրական շինարարության մեջ: Մենք արագորեն հաղթահարում ենք ցարիզմի խայտառակ ժառանգությունը հանդիսացող աշխատավոր մասսաների տգիտությունն ու խավարը: Մենք անգրագիտությանը հարվածում ենք յերկու ծայրից՝ լիկկայաններով և ընդհանուր պարտադիր կրթությամբ:

1928 թ. մեր լիկկայաններն ու կիսագրագետների դպրոցները գրագետ դարձրեցին 800.000 հոգու, 1929 թ.—2 միլիոն, 1930 թ.—10 միլիոն հոգու: 1931 թ. սովորելու յեն 17 և կես միլիոն անգրագետ և կիսագրագետ:

Կաուսակցության 16-րդ համագումարը վորոշեց սկսել յերեխաների ընդհանուր պարտադիր ուսուցում: Այդ խնդիրը մենք կատարում ենք հաջողությամբ: I աստիճ. դպրոցներում 1929 թ. սովորում եյին 9 միլիոն յերեխա, 1930 թ.— 11 միլիոն և 1931 թ.—14 միլիոն յերեխա:

Լուսավորության գործի հաջողություններն առանձնապես մեծ են ազգային հանրապետություններում և մարզերում:

Ահա, թե ինչ նվաճումներ ունի, որինակ՝ Ադիգեյի ինքնավար շրջանը: Այնտեղ ապրում են չերքեզները: Ցարի ժամանակ այդ շրջանի ազգաբնակչությունը մեռնում եր թշվառությունից և քաղցից: Գրագետները կազմում եյին միայն 3 տոկոս: 1930 թ. Ադիգեյում գրագետներն արդեն 42 տոկոս եյին կազմում: 1931 թ. դպրոցներն ու լիկկայաններն ընդգրկել են բոլոր անգրագետներին և կիսագրագետներին: Բոլոր յերեխաներն ընդգրկված են պարտադիր ուսման հիմնարկների ցանցով:

ԽՍՀՄ ամենահետամնաց և խուլ անկյուններում Ադիգեյի նման տեղի ունի պայքար հանուն գրագիտության, հանուն կուլտուրայի:

Աճում է միջնակարգ և բարձրագույն դպրոցների թիվը: Հիմնված են բանֆակներ՝ հազարավոր բանվորների և գյուղացիների բարձրագույն կրթական հիմնարկների համար պատրաստելու նպատակով: Լայնորեն ծավալվել է կինոյի և ռադիոյի գործունեությունը: Լրագիրն ու գիրքը աշխատավորների ձեռքում դարձել են պայքարի մի զենք, հանուն սոցիալիզմի:

Սակայն, այդ բոլոր հսկայական հաջողությունները դեռևս բավարար չեն: Մենք պետք է կապիտալիստներին հասնենք և առաջ անցնենք վոչ միայն տնտեսապես, այլ և կուլտուրական շինարարության մեջ:

Հնգամյա պլանը հաստատապես պահանջում է լավ պատրաստված և հմուտ աշխատավորներ տնտեսության բոլոր ճյուղերից: Հնգամյակի յերբորդ տարում մենք կարիք կունենանք 1.300.000 պատրաստված բանվորների՝ խառատների, փականագործների, մանտյորների և այլն: Պահանջվում է արտադրության մեջ մտցնել 1.600.000 կին: Դրա համար պետք է կանանց ազատել խոհանոցից, հիմնել նոր ճաշարաններ, լվացքատներ, մսուրներ:

Մենք պետք է ամենակարճ ժամանակամիջոցում հարյուր հազարավոր աշխատավորներ տանք սոցիալիստական կառուցման համար: Մենք պետք է կրթական ամբողջ գործը՝ սկսած լիկկայանից մինչև բարձրագույն դպրոցը, կապենք արտադրության հետ:

Դպրոցը միացնել արտադրությանը,—ահա մեր մարտական խնդիրը: Մենք կուլտուրայի հենակետեր ունենք մեր ամբողջ յերկրում: Դրանք գործարաններն են, մեքենատրակտորային կայանները, խորհտնտեսությունները, կոլտնտեսությունները: Մենք նրանց պետք է ամրացնենք մեր դպրոցները:

Մենք չենք կարողանում արտադրությունը ճիշտ կազմակերպել: Մենք տեխնիկական, արտադրական գիտելիքներ քիչ ունենք: Այդ հանգամանքը արգելք է հանդիսանում մեր առաջխաղացմանը: Այդ հանգամանքը ձեռնտու է վնասարարներին: Մենք հաճախ չենք կարողանում ստուգել հին մասնագետներին՝ տեխնիկների և ճարտարագետների աշխատանքը: Նրանց մի մասն ոգտվում է այդ թերությունից մեզ վնասելու համար:

«Մենք ինքներս պետք է դառնանք մասնագետներ,

գործի տնորեններ: Մենք պետք է յերեսներս դարձնենք դեպի տեխնիկան, դեպի տեխնիկական գիտելիքները» (Ստալին):

Գրքի դիմենք հանուն գրագիտության, հանուն պատրաստելու: Հանուն տեխնիկային տիրապետելու: Հանուն կուլտուրական հեղափոխության հաղթանակի»:

ԽՏԱՑՆԵՆՔ ՇԱՐՔԵՐԸ ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

Կոմունիստական կուսակցությունը մեր յերկրում առաջնորդում է դեպի սոցիալիզմի հաղթանակը: Կուսակցությունը կոփված է պրոլետարիատի թշնամիների, հեղափոխության գործի դավաճանների և մատնիչների դեմ մղած յերկարատև մարտերում:

Կուսակցությունը հակահարված է տալիս բոլոր նրանց, ովքեր փորձում են շեղել նրան Լենինյան ճիշտ գծից:

Լենինի մահվանից հետո, կուսակցությունը պայքար ծավալեց Տրոցկու և նրա համախոհ «ձախերի» դեմ: «Ձախերը» չեյին հավատում պրոլետարիատի ուժին: Նրանք չեյին հավատում սոցիալիզմ կառուցելու հնարավորությանը մեր յերկրում: «Ձախերը» կարծում եյին, թե միջակը չի կարող դաշնակից լինել բանվոր դասակարգին, չի կարող սոցիալիզմ կառուցել: Տրոցկին և «ձախերը» կուսակցությանը դրդում եյին խզել իր կապերը միջակի հետ:

«Ձախերը» ջախջախված են: Իրականության մեջ պարզվեց, որ չքավոր-միջակային մասսաները կուսակցության ղեկավարությամբ հաջողությամբ կառուցում են սոցիալիզմը: Աճում են սոցիալիստական տնտեսությունները՝ կոլտնտեսություններն ու խորհրդտնտեսությունները: Կոլտնտեսականը դարձել է կուսակցության և բանվոր դասակարգի ամուր հենարանը:

Կուլակին աշխատում է դադարեցնել սոցիալիստական հարձակումը: Նա ազդեցություն է գործում կուսակցության անկայուն անդամների վրա: Նրանց մեջ առաջանում են տատանումներ: Այդպես առաջացավ աջ թեքումը կուսակցության մեջ: Այդ թեքումը գլխավոր վտանգը հանդիսացավ սոցիալիզմի շինարարության համար:

Աջերը գտնում եյին, որ հնդամյակն անիրագործելի յե: Նրանք առաջարկում եյին դանդաղեցնել ծանր արդյունաբերության աճումը: Աջերը հանդես եյին գալիս կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների արագ զարգացման դեմ: Նրանք իրենց պաշտպանության տակ առան կուլակին: Նրանք կոչ եյին անում զիջումներ անել կուլակին: Նրանք կարծում եյին, թե կուլակը խաղաղորեն կներառվի սոցիալիզմ:

Կուսակցությունն աջերի ճանապարհով չգնաց: Կուսակցությունը գնում է Լենինի ճանապարհով: Լենինն ասում եր, թե կուլակը պրոլետարիատի չարանենգ թշնամին է՝ ճիշտ այնպես, ինչպես կալվածատերերն ու կապիտալիստը: Կուլակի հետ հաշտություն լինել չի կարող: Կամ մենք նրան պետք է վոչնչացնենք կամ նա մեզ կճզմի:

Թե «ձախերը» և թե աջերը, մեր յերկրում հետ եյին մղում դեպի կապիտալիզմ: Նրանք նպաստում եյին դասակարգային թշնամու գործին: Վնասարարներն իրենց հույսը դրել եյին աջերի հաղթանակի վրա կուսակցության մեջ: Աջերի քաղաքականությունը թեթևացնում եր վնասարարական աշխատանքը: Վնասարարները հույս ունեյին, թե կուսակցության պառակտումը կնպաստի իրենց՝ խախտելու սոցիալիզմի շինարարությունը:

Այդ հույսերը կործանվեցին: Կուսակցությունը ջախջախեց և՛ աջերին, և՛ «ձախերին»: Կուսակցությունն անողոքաբար վտարում է նրանց իր շարքերից: Կուսակցությունն ամուր և միաձույլ է, ինչպես առաջ:

Կուսակցությունը կարողացավ համախմբել միլիոնավոր աշխատավորներին և նրանց առաջնորդել պայքարելու հանուն սոցիալիզմի: Կուսակցությունը յերկրում առաջացրեց աշխատանքային հզոր վերելք: Մեր յերկիրը գտնում է համաշխարհային պրոլետարիատի հավատարիմ բրիգադը՝ ամենակարճ ժամանակամիջոցում սոցիալիզմը կառուցելու տեսակետից:

Բանվոր դասակարգը կուսակցության հետ միասին ջախջախիչ հակահարված է տալիս բոլոր նրանց, ովքեր չեն հավատում սոցիալիզմի կառուցմանը: Աջերի և «ձախերի» վոտնձգություններին, վնասարարների յեղությունին բանվոր դասակարգը պատասխանում է կուսակցության շարքերն ուժեղացնելով: Միմիայն 1930 թ., մեկ տարում կուսակցության մեջ մտան 650·000 հոգի, վորից 450·000 արտադրական բանվորներ: Այս հանգամանքը վկայում է, վոր բանվոր դասակարգը անխորտակելի կերպով միացած է կուսակցության հետ: Այս հանգամանքը վկայում է Խորհրդային Միության աշխատավորական մասսաների հեղափոխական բարձր տրամադրության մասին:

Հանուն լենինյան ճանապարհի! Հանուն սոցիալիզմի հաղթանակի ամբողջ աշխարհում!

ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ԴՐՈՇԻ ՏԱԿ ԴԵՊԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Մայիսի 1-ը մեր ուրախ և խիզախ տոնն է: Դրոշակներով, յերգերով, յերաժշտությամբ, աղատ՝ ինչպես և վոչ մի տեղ աշխարհում, աշխատավորների շարքերը կանցնեն քաղաքների և գյուղերի փողոցներով: Մեր լոզունգներն ու պլակատները կազդարարեն սոցիալիզմի շինարարության մեջ ունեցած հաղթանակներն ու հաջողությունները:

Սակայն, տոնական ուրախությունը չպետք է վարագուրի մեր հոգսերը հնգամյակի յերրորդ տարվա խնդիրների կատարման վերաբերյալ: Մենք միայն մեզ համար չենք աշխատում: ԽՍՀՄ բանվոր դասակարգը համաշխարհային բանվոր դասակարգի մի մասն է:

«Մենք պետք է այնպես առաջ գնանք, վոր ամբողջ աշխարհի բանվոր դասակարգը մեզ նայելով կարողանա ասել՝ ահա նա, իմ առաջավոր ջոկատը, ահա նա, իմ հարվածային բրիգադը, ահա, իմ բանվորական իշխանությունը, ահա նա, իմ հայրենիքը: Նրանք իրենց գործը՝ վոր մեր գործն է, լավ են կատարում: Պաշտպանենք նրանց ընդդեմ կապիտալիստների և ուժ տանք համաշխարհային հեղափոխության գործին» (Ստալին):

Մենք պետք է արդարացնենք համաշխարհային պրոլետարիատի հույսերը: Մենք պետք է իրագործենք սոցիալիստական շինարարության համար նախագծված պլանները:

Բուրժուազիան և նրա կամակատար սոցիալ-դեմոկրատները մեր տոնը կդիմավորեն չարամիտ վերաբերմունքով, փրփրաբերան, կեղծիքի ու զրպարտության նոր հեղեղով: ա:ֆի թա

Մի տարի առաջ պապական վոհմակը՝ Հռոմի պապի գլխավորությամբ, հայտարարեց հետեվյալ մարտակոչը՝ «խաչակրաց արշավանք ԽՍՀՄ դեմ! այնտեղ հետապնդում են կրոնը»: Իսկ այժմ բուրժուական լրագրերը ճչում են ԽՍՀՄ-ում կիրառվող «հարկադրական աշխատանքի» մասին:

Բուրժուազիան համարձակվում է «հարկադրական աշխատանք» անվանելու մեր սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունն, մեր աշխատանքային մեծ վերելքը, մեր 7-ժամյա բանվորական որը: Նա լռում է այն մասին, վոր ստրկական հարկադրական աշխատանքի տանջանքների մեջ հեծում են կապիտալիստական յերկրների և գաղութների աշխատավորները:

Բուրժուազիան և սոցիալ-դավաճանները ցանկանում են հիմարացնել իրենց յերկրների աշխատավորությունը, վորպեսզի նրանց պատերազմի ուղարկեն ԽՍՀՄ-ի դեմ:

Մայիսի 1-ի որը մենք դիմում ենք ամբողջ աշխարհի աշխատավորներին, կոչ անելով՝

Հաստատապես կանգնեցեք ԽՍՀՄ պաշտպանության դիրքերում:

Կազմակերպեցեք ձեր ուժերը կապիտալիզմի տապալման համար!

Կորչեն սոցիալ-դավաճանները!

Համախմբվեցեք Կոմունիստական կուսակցությունների շուրջը!

Սոցիալ-դավաճանները մեկ անգամ չեն խախտել Մայիսի 1-ի մարտական տոնակատարությունը: 1929 թվի մայիսի 1-ին սոցիալ-դեմոկրատ վոստիկանապետ

Ներգրեբելի հրամանով Բեռլինի փողոցներում գնդակահարվեցին տասնյակ բանվորներ:

Ներկայումս ել սոցիալ-դավաճանները պետք է համոզեն բանվորներին հետ կենալու հեղափոխական յելույթներից: Նրանք նախընթաց տարիների նման կաշխատեն պրոլատարիատի մարտական յերթերը վերածել փողոցներում կատարվող խաղաղ զբոսանքի: Նրանք ոգնելու յեն բուրժուազիային ցրելու և գնդակոծելու հեղափոխական ցույցերը:

Սակայն, բանվոր դասակարգը մայիսի 1-ի որը փողոց դուրս կգա Կոմինտերնի դրոշակներով: Նա ցույց կտա իր վճռականությունը կապիտալի դեմ պայքարելու, ԽՍՀՄ պաշտպանելու պատրաստակամության վերաբերյալ:

Մայիսի 1-ի որն ավելի սերտորեն կմիացնի բոլոր յերկրների կեղեքվածներին՝ պայքարելու հանուն Խորհրդային իշխանության ամբողջ աշխարհում:

Մայիսի 1-ի որը կրկին կհռոսի բանվորների արյունը: Հարյուրավոր և հազարավոր հեղափոխականներ կրկին կնետվեն բանտերը:

Մեր մեծ տոնին մենք չպետք է մոռանանք կապիտալիստական բանտերում տառապողների մասին: Մենք պետք է հիշենք այն մարտիկներին, վորոնք իրենց կյանքով և յերկարատև բանտարկությամբ են հատուցում բանվոր դասակարգի գործին ցույց տված իրենց անձնվիրության համար: Ուժեղացնենք հեղափոխության մարտիկների ոգնության գործը:

Պրոլետարիատի միջազգային միասնության ամրապնդումը հանդիսանում է ՄՈՊՐ-ի աշխատանքի հիմքը:

ՄՈՊՐ-ի կազմակերպություններն ամենատակտիվ մասնակցությունը պետք է ցույց տան մայիսմեկյան յելույթներին: Նրանք աշխատավորության մեջ պետք է պարզաբանեն ՄՈՊՐ-ի խնդիրները: Նրանք պետք է ուժեղացնեն իրենց մասնակցությունը ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության, իրենց ոգնությունը՝ ուժգնորեն աճող միջազգային հեղափոխական շարժման:

«Բուրժուազիան աննկարագրելի սարսափ է զգում պրոլետարիատի հեղափոխական շարժման աճման հանդեպ...

Միջազգային համաշխարհային հեղափոխությունը ակտիվում և ուժեղանում է բոլոր յերկրներում...

Թող բուրժուազիան շարունակի իր վայրագությունները, թող նա դարձյալ սպանի հազարավոր բանվորների.—հաղթանակը մերն է: Համաշխարհային կոմունիստական հեղափոխության հաղթանակն ապահովված է» (Լենին):

ԳԻՆԸ 15 ԿՈՊ. (2 Մ.)

А. и В. ГУСЕВЫ

ПЕРВОЕ МАЯ

Госиздат ССР Армении
Эривань 1931